ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԶԵՐԻ, ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ 1-3-ՐԴ ԵՎ 4-7-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՄԻՋԵՎ «ՍՊՈՐՏԼԱՆԴԻԱ» ՄԱՐԶԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՍՊ-ՊԸԾՁԲ-17/09-108-2017

ք. Երևան «10» 03 2017թ.

ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Վահե Էլոյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Իմպերիում» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Դ. Հովհաննիսյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Հայաստանի Հանրապետության մարզերի, Երևան քաղաքի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրակրթական դպրոցների 1-3-րդ և 4-7-րդ դասարանների աշակերտների միջև «Սպորտլանդիա» մարզական միջոցառման անցկացման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գաս դրա սր սասր կատարաաս արդյունքներս ընդունվում ես Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (Հավելված N 3) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 2 օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է 19 823 000 (տասնինը միլիոն ութ հարյուր քսաներեք հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 2017 թ. Դեկտեմբերի 25-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[1]:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենդրությամբ սահմանված կարգով:

---

[1] *Պայմանագիրն օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում կիրառվեն ֆինանսական միջոցներ և կնքվի համաձայնագիր:*

5.4 Տույժերը և (կամ) տուգանքը կձարուսը Կողմերիս չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.4 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով

1) Կատարողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Կատարողը գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում[2]:

7.5 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում կոնսորցիումի հետ Պատվիրատուի

[2] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում գործակալության պայմանագիր կնքելու միջոցով:*

կսքաց պայմանագրրը սրագողսարորես լուծվում է և կոսորցրուսր ասդասսերր սպատսասբ կրրառվում ես պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները՝:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

7.7 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Կատարողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.9 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.10 Սույն պայմանագիրը կազմված է 13 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N2 , N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.11 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն ք. Երևան, Աբովյան 9 ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն Հ/Հ 900011010957 ՀՎՀՀ02586282	« Իմպերիում » ՍՊԸ ք. Երևան, ԱՐԱԲԿԻՐ Ա.ԱՎԵՏԻՍՅԱՆ 112 7 «Ինեկոբանկ»ՓԲԸ Հ/Հ 2050622060861001 ՀՎՀՀ 00135548
Աշխատակազմի ղեկավար՝ Վ. Էլոյան (ստորագրություն) Կ.Տ.	Տնօրեն՝ Դ.Հովհաննիսյան (ստորագրություն) Կ.Տ.

Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համատեղ գործունեության (կոնսորցիում) պայմանագիր կնքելու միջոցով

Հավելված 1
«10» 03 2017թ. կնքված

N ՍՊ-ՊԸԾՁԲ-17/09-108-2017 *ծածկագրով գնման պայմանագրի*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Ձեռքբերվող Ծառայության նկարագիր

Հայաստանի Հանրապետության մարզերի, Երևան քաղաքի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրակրթական դպրոցների 1-3-րդ և 4-7-րդ դասարանների աշակերտների միջև «Սպորտլանդիա» մարզական միջոցառման 2017 թվականի մրցույթի անցկացման ծառայությունների ձեռքբերում

Միջոցառման անցկացման նպատակն է՝

1. Անհատի բազմակողմանի ու ներդաշնակ զարգացում, դպրոցահասակ երեխաների առողջության ամրապնդում, առողջ ապրելակերպի ձևավորման գործում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի դերի բարձրացում.

1) Դպրոցական տարիքի երեխաների շրջանում տարբեր մարզաձևերով մարզվելու կողմնորոշման ձևավորում:

2. Խնդիրներն են՝

1) Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի միջոցով դպրոցահասակ երեխաների առողջության ամրապնդում, նրանց ֆիզիկական որակների բարելավում.

2) Դպրոցական տարիքի երեխաների շրջանում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի քարոզչություն, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի դերի կարևորում.

3) Դպրոցական տարիքի երեխաների համար ֆիզիկական դաստիարակության, ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելու համար նպաստավոր պայմանների ստեղծում.

4) Դպրոցական հիմնարկներում ֆիզկուլտուրային, առողջարարական և զանգվածային մարզական աշխատանքների խթանում:

3. Միջոցառումն անցկացվելու է 3 փուլով.

1) 1-ին փուլը՝ համայնքներում 2017 թ. մարտի 10-25-ը.

2) 2-րդ փուլը՝ մարզերում 2017 թ. ապրիլի 20-ից 29-ը, Երևան քաղաքում և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում.

3) 3-րդ եզրափակիչ փուլը, ք. Երևանում 2017 թ. մայիսի 11-ից 17-ը, 1-3-րդ դասարանցիների և 4-7-րդ դասարանի աշակերտների միջև:

4. Համայնքային և մարզային փուլերի անցկացման ժամանակացույցը ներկայացվում է Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն (այսուհետ՝ Նախարարություն): Անցկացման ժամանակացույցը Նախարարություն ներկայացնել մինչև 2017 թվականի փետրվարի 28-ը:

5. «Սպորտլանդիա» մարզական միջոցառման անցկացման աշխատանքները համակարգում է Նախարարությունը:

6. 1-ին փուլի մրցումների կազմակերպման և անցկացման աշխատանքները համայնքներում իրականացնում են քաղաքապետարանները, իսկ 2-րդ փուլի մրցումների կազմակերպման և անցկացման անմիջական պատասխանատվությունը դրվում է Նախարարության, Հայաստանի Հանրապետության մարզպետարանների, Երևանի քաղաքապետարանի, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարության վրա:

3-րդ եզրափակիչ փուլի կազմակերպման և անցկացման անմիջական պատասխանատվությունը դրվում է Նախարարության վրա:

7. Ծրագիրը իրականացվում է ՀՀ մարզերի 39 քաղաքներում (տարածաշրջաններում), Երևան քաղաքի 12 վարչական շրջաններոիմ և ԼՂՀ հանրակրթական դպրոցների 1-3-րդ դասարանների բոլոր երեխաները (թիմի կազմը՝ 5 տղա, 5 աղջիկ և 1 մանկավարժ) և 4-7-րդ դասարանների բոլոր երեխա (թիմի կազմը՝ 5 տղա, 5 աղջիկ և 1 մանկավարժ):

8. Ծրագրի կազմակերպման և անցկացման կարգը տեղերում որոշում են կազմակերպիչները (համայնքապետարաններ, մարզպետարաններ և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարությունը): Մրցումների անցկացման կարգում կարող են կատարվել մասնակի լրացումներ և փոփոխություններ:

9. Մրցույթի **1-ին փուլում** մրցանակային տեղեր գրաված դպրոցները պարգևատրվում են Նախարարության, համայնքապետարանների համապատասխան կարգի հավաստագրերով, գավաթներով, շնորհակալագրերով և մրցանակներով, իսկ **2-րդ փուլերում** 1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը գրաված դպրոցները պարգևատրվում են Նախարարության, Հայաստանի Հանրապետության մարզպետարանների, Երևանի քաղաքապետարանի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարության համապատասխան կարգի հավաստագրերով, գավաթներով, շնորհակալագրերով և մրցանակներով (մարզագույք).

10. Սպորտլանդիայի **3-րդ եզրափակիչ փուլում** ընդհանուր թիմային հաշվարկով 1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը գրաված հանրակրթական դպրոցները պարգևատրվում են Նախարարության հավաստագրերով, գավաթներով, մարզագույքով, շնորհակալագրերով և մրցանակներով:

11. Մրցույթի եզրափակիչ փուլի մրցանակային 1-ին, 2-րդ, 3-րդ տեղերը գրաված հանրակրթական դպրոցները երկու տարիքային խմբերով պարգևատրվում են մարզագույքով:

12. Միջոցառման ծախսերն իրականացվում են տարեկան պետական բյուջեով նախատեսված ծրագրի շրջանակում:

1-ին փուլում մասնակցող դպրոցներ 10.03.2017 - 25.03.2017 թթ. (1-3-րդ դասարան և 4-7-րդ

1) **1-ին փուլը՝** իրականացվում է ՀՀ մարզերի 39 քաղաքներում (տարածաշրջաններում), Երևան քաղաքի 12 վարչական շրջաններում և ԼՂՀ հանրակրթական դպրոցների 1-3-րդ և 4-7-րդ դասարանների աշակերտների միջև:

- **Հավաստագիր.** չափը՝ 30 x 20 սմ, թղթե, օֆսեթ, կավճապատ, խտությունը՝ 220 գ/քմ:

Տեքստը համաձայնեցնել նախարարության աշխատակազմի ՄՍՖԴՔ վարչության հետ.

156 հատ՝ 1-3-րդ դասարանցիների մրցույթի համար. 156 հատ՝ 4-7-րդ դասարանցիների մրցույթի համար. **Ընդհամենը՝ 312 հատ**

- **Գավաթ** (1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը գրաված դպրոցների համար)՝ 50 սմ, 40 սմ և 35 սմ բարձրությամբ, ոսկեգույն, էբոնիտե պատվանդանով.

156 հատ՝ 1-3-րդ դասարանցիների մրցույթի համար. 156 հատ՝ 4-7-րդ դասարանցիների մրցույթի համար. **Ընդհամենը՝ 312 հատ**

<u>2-րդ փուլում</u> մատուցվող ծառայություններ՝ 2017թ. ապրիլի 20-23-ը՝ (1-3-րդ դասարաններ), 2017թ. ապրիլի 26-29-ը (4-7-րդ դասարաններ)

2) **2-րդ փուլը՝** իրականացվում է ՀՀ մարզերում, Երևան քաղաքում և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում.

- **Հավաստագիր.** չափը՝ 30 x 20 սմ, թղթե, օֆսեթ, կավճապատ, խտությունը՝ 220 գ/քմ

Տեքստը համաձայնեցնել նախարարության աշխատակազմի ՄՍՖԴՔ վարչության հետ

36 հատ՝ 1-3-րդ դասարանցիների մրցույթի համար.

36 հատ՝ 4-7-րդ դասարանցիների մրցույթի համար.

Ընդհամենը՝ 72 հատ

- **Գավաթ** (1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը գրաված դպրոցների համար)՝ 50 սմ, 40 սմ և 35 սմ բարձրությամբ, ոսկեգույն, էբոնիտե պատվանդանով.

36 հատ՝ 1-3-րդ դասարանցիների մրցույթի համար.

36 հատ՝ 4-7-րդ դասարանցիների մրցույթի համար.

Ընդհամենը՝ 72 հատ

Մարզագույք 1-ին տեղը գրաված դպրոցին՝

Գնդակ ֆուտբոլի՝ Արհեստական կաշվից, N 5 չափի (68-70սմ շրջանագիծ), քաշը 420-440 գրամ, 32 կտորից (պանել) կարված՝ առնվազն 5 սինթետիկ թելիկներից գործված կարի թելով, 4 շերտ, պոլիեստերի կամ բամբակե ներքին շերտով, ռետինե կամ լատեքսե միջուկով (կամերով),

(3+3=6 հատ x 12 = **72 հատ**)

Գնդակ վոլեյբոլի՝ Արհեստական կաշվից, N 5 չափի (65-67սմ շրջանագիծ), քաշը 260-280 գրամ, 18 կտորից (պանել) ձեռքով կամ մեքենայով կարված՝ առնվազն 5 սինթետիկ թելիկներից գործված կարի թելով, 2 շերտ, պոլիեստերի կամ բամբակե ներքին շերտով, ռետինե կամ լատեքսե միջուկով (կամերով), բազմերանգ գունավորմամբ N 6,

(3+3=6 հատ x 12 = **72 հատ**)

- **Գնդակ բասկետբոլի՝** Արհեստական կաշվից, (75-75.88սմ շրջանագիծ), քաշը 567-650գրամ, 12 կտորից (պանել), երկու գույնանի, բացօդյա և փակ դահլիճներում օգտագործելու համար, N 5 կամ N 6,

(3+3=6 հատ x 12 = **72 հատ**)

- **Վոլեյբոլի ցանց՝** Ցանցի բարձրությունը 1մ լայնությունը 9.5-10մ: Վերին եզրը 7սմ բարձրությամբ իսկ ստորին եզրը 5 սմ բարձրությամբ ժապավեններով սահմանազատված: Վերին ժապավենի միջով անցկացված 4մմ հաստությամբ առնվազն 15մ երկարությամբ պողպատե ճոպանով, ներքևի ժապավենի միջով՝ ստորին եզրը ձգելու պարանով, գործվածքը 10x10 սմ անցքերով, սև գույնի սինթեթիկ մանրաթելերից գործված 2-3մմ հաստությամբ թելից: Ցանցի ծայրերում իրարից 9մ հեռավորության վրա տեղադրված են 1մ բարձրությամբ և 5 սմ լայնությամբ դաշտի սահմանները եզրագծող ժապավեններ,

(1+1=2 հատ x 12 = **24 հատ**)

- Սեղանի թենիսի ձեռնաթի (ռակետ) Փայտյա բռնիչով 10սմ երկարությամբ, հարթ մակերևույթը ռետինե երեսով, հարվածային մասը չափերը 15-15.5սմ x 15.5-16սմ և 1.2 սմ հաստությամբ,

(4+4=8 զույգ x 12 = **96 հատ**)

- Ցատկապարաններ. պարանը ռետինե, բռնիչները՝ պլաստմասսե, 2-2,5 մետր երկարությամբ, իր տուփի մեջ, մրցումային և մարզումային ստանդարտներին համապատասխան,

(6+6=12 հատ x 12 = **144 հատ**)

- Մարմնամարզական ներքնարկներ՝ չափը 1 մ x 2 մ, պատրաստված սպունգից, երեսպատված արհեստական կաշվով,հաստությունը 7-10 սմ,

(1+1=2 հատ x 12 = **24 հատ**)

- Վայրկյանաչափ էլեկտրոնային, պլաստմասսե պատյանով:

(3+3=6 հատ x 12 = **72 հատ**)

2-րդ տեղը գրաված դպրոցը՝

- **Գնդակ ֆուտբոլի՝** Արհեստական կաշվից, N 5 չափի (68-70սմ շրջանագիծ), քաշը 420-440 գրամ, 32 կտորից (պանել) կարված՝ առնվազն 5 սինթետիկ թելիկներից գործված կարի թելով, 4

(3+3=6 հատ x 12 = 72 հատ)

- **Գնդակ վոլեյբոլի**՝ Արհեստական կաշվից, N 5 չափի (65-67սմ շրջանագիծ), քաշը 260-280 գրամ, 18 կտորից (պանել) ձեռքով կամ մեքենայով կարված՝ առնվազն 5 սինթետիկ թելիկներից գործված կարի թելով, 2 շերտ, պոլիեստերի կամ բամբակե ներքին շերտով, ռետինե կամ լատեքսե միջուկով (կամերով), բազմերանգ գունավորմամբ N 6,

(2+2=4 հատ x 12 = **48 հատ**)

- **Գնդակ բասկետբոլի**՝ Արհեստական կաշվից, N 7 չափի (75-75.88սմ շրջանագիծ), քաշը 567-650գրամ, 12 կտորից (պանել), երկու գույնանի, բացօդյա և փակ դահլիճներում օգտագործելու համար, N 5 կամ N 6,

2+2=4 հատ x 12 = **48 հատ**)

- **Վոլեյբոլի ցանց**՝ Ցանցի բարձրությունը 1մ լայնությունը 9.5-10մ: Վերին եզրը 7սմ բարձրությամբ իսկ ստորին եզրը 5 սմ բարձրությամբ ժապավեններով սահմանազատված: Վերին ժապավենի միջով անցկացված 4մմ հաստությամբ առնվազն 15մ երկարությամբ պողպատե ճոպանով, ներքևի ժապավենի միջով՝ ստորին եզրը ձգելու պարանով, գործվացքը 10x10 սմ անցքերով, սև գույնի սինթեթիկ մանրաթելերից գործված 2-3մմ հաստությամբ թելից: Ցանցի ծայրերում իրարից 9մ հեռավորության վրա տեղադրված են 1մ բարձրությամբ և 5 սմ լայնությամբ դաշտի սահմանները եզրագծող ժապավեններ,

(1+1=2 հատ x 12 = **24 հատ**)

- **Սեղանի թենիսի ձեռնաթի (ռակետ)**՝ Փայտյա բռնիչով 10սմ երկարությամբ, հարթ մակերևույթը ռետինե երեսով, հարվածային մասը չափերը 15-15.5սմ x 15.5-16սմ և 1.2 սմ հաստությամբ,

(3+3=6 զույգ x 12 = **72 զույգ**)

- **Ցատկապարաններ**, պարանը ռետինե, բռնիչները պլաստմասսե, 2-2,5 մետր երկարությամբ, իր տուփի մեջ, մրցումային և մարզումային ստանդարտներին համապատասխան,

(4+4=8 հատ x 12 = **96 հատ**)

- **Մարմնամարզական ներքնակներ** չափսը 1 մ x 2 մ, պատրաստված սպունգից, երեսպատված արհեստական կաշվով,հաստությունը 7-10 սմ,

(1+1=2 հատ x 12 = **24 հատ**)

- **Վայրկյանաչափ էլեկտրոնային**, պլաստմասսե պատյանով:

(2+2=4 հատ x 12 = **48 հատ**)

3-րդ տեղը գրաված դպրոցը՝

- **Գնդակ ֆուտբոլի**՝ Արհեստական կաշվից, N 5 չափի (68-70սմ շրջանագիծ), քաշը 420-440 գրամ, 32 կտորից (պանել) կարված՝ առնվազն 5 սինթետիկ թելիկներից գործված կարի թելով, 4 շերտ, պոլիեստերի կամ բամբակե ներքին շերտով, ռետինե կամ լատեքսե միջուկով (կամերով),

(2+2=4 հատ x 12 = **48 հատ**)

- **Գնդակ վոլեյբոլի** Արհեստական կաշվից, N 5 չափի (65-67սմ շրջանագիծ), քաշը 260-280 գրամ, 18 կտորից (պանել) ձեռքով կամ մեքենայով կարված՝ առնվազն 5 սինթետիկ թելիկներից գործված կարի թելով, 2 շերտ, պոլիեստերի կամ բամբակե ներքին շերտով, ռետինե կամ լատեքսե միջուկով (կամերով), բազմերանգ գունավորմամբ N 6,

(2+2=4 հատ x 12 = **48 հատ**)

- **Գնդակ բասկետբոլի**՝ Արհեստական կաշվից, N 7 չափի (75-75.88սմ շրջանագիծ), քաշը 567-650գրամ, 12 կտորից (պանել), երկու գույնանի, բացօդյա և փակ դահլիճներում օգտագործելու համար, N 5 կամ N 6,

(2+2=4 հատ x 12 = **48 հատ**)

- **Վոլեյբոլի ցանց**՝ Ցանցի բարձրությունը 1մ լայնությունը 9.5-10մ: Վերին եզրը 7սմ բարձրությամբ իսկ ստորին եզրը 5 սմ բարձրությամբ ժապավեններով սահմանազատված: Վերին ժապավենի միջով անցկացված 4մմ հաստությամբ առնվազն 15մ երկարությամբ պողպատե ճոպանով, ներքևի ժապավենի միջով՝ ստորին եզրը ձգելու պարանով, գործվացքը 10x10 սմ անցքերով, սև գույնի սինթեթիկ մանրաթելերից գործված 2-3մմ հաստությամբ թելից: Ցանցի ծայրերում իրարից 9մ հեռավորության վրա տեղադրված են 1մ բարձրությամբ և 5 սմ լայնությամբ դաշտի սահմանները եզրագծող ժապավեններ,

(1+1=2 հատ x 12 = **24 հատ**)

- **Ցատկապարաններ**՝ պարանը ռետինե, բռնիչները պլաստմասսե, 2-2,5 մետր երկարությամբ, իր տուփի մեջ, մրցումային և մարզումային ստանդարտներին համապատասխան,

(4+4=8 հատ x 12 = **96 հատ**)

- **Մարմնամարզական ներքնակներ** չափսը 1 մ x 2 մ, պատրաստված սպունգից, երեսպատված արհեստական կաշվով,հաստությունը 7-10 սմ,

(1+1=2 հատ x 12 = **24 հատ**)

3-րդ եզրափակիչ փուլում մատուցվող ծառայություններ 2017թ. մայիսի 11-13-ը՝ (1-3-րդ դասարաններ), 2017թ. մայիսի 15-17-ը (4-7-րդ դասարաններ).

3) 3-րդ եզրափակիչ փուլը. կանցկացվի քաղաք Երևանում:

- **Մարզադահլիճի վարձակալում և ռադիոհանգույցի ապահովում** Երևանի մարզաբազաներից մեկում («Դինամո», «Միկա» կամ «Խուլերի հայկական կոմիտե» ՀԿ մարզահամալիր), մարզադահլիճի ձևավորում դրոշակներով և պաստառներով զարդարված

2 օր

- **Հավաստագիր**. չափսը՝ 30 x 20 սմ, թղթե, օֆսետ կամ թվային հյուրություն՝ 220 գ/մ²

Տեքստը համաձայնեցնել նախարարության
աշխատակազմի ՄՍՖԴՔ վարչության հետ.
39 հատ 1-3-րդ դասարանցիների մրցույթի համար և 39 հատ՝ 4-7-րդ դասարանցիների մրցույթի համար

Ընդ. 78 հատ

- **Շնորհակալագիր**. չափը՝ 30 x 20 սմ, թղթե, օֆսեթ, կավճապատ, խտությունը՝ 220 գ/քմ
Տեքստը համաձայնեցնել նախարարության
աշխատակազմի ՄՍՖԴՔ վարչության հետ.
10 հատ 1-3-րդ դասարանցիների մրցույթի համար և **10 հատ**՝ 4-7-րդ դասարանցիների մրցույթի համար

Ընդ. 20հատ

- **Մեդալներ**. չափը՝ 5 սմ տրամագծով x 3 մմ հաստությամբ, մետաղե ձուլվածք, եռագույն ժապավենով՝ 0.80 սմ երկարությամբ, սինթետիկ հումքից.
36 հատ 1-3-րդ դասարանցիների մրցույթի համար.
36 հատ 4-7-րդ դասարանցիների մրցույթի համար.

Ընդհամենը 72 հատ

- **Գավաթ** (1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը գրված դպրոցների համար)՝ 65 սմ, 60 սմ և 50 սմ բարձրությամբ, ոսկեգույն, էրոնիտե պատվանդանով.
3 հատ 1-3-րդ դասարանցիների մրցույթի համար.
3 հատ 4-7-րդ դասարանցիների մրցույթի համար.

նդհամենը 6 հատ

- ***Մրցավարների համար մարզահագուստ***
բամբակյա կտորից, ամառային շապիկ և գլխարկ, գույնը՝ սպիտակ (հանձնվում է անհատույց, սեփականության
իրավունքով).

18 հատ

- ***Նվերներ. մարզահագուստ մասնակից բոլոր երեխաների համար***՝ կիսասինթետիկ հումքից, վերնազգեստը կարմիր՝ եզրագծված սև և սպիտակ գծերով, տաբատը սև (հանձնվում է անհատույց, սեփականության իրավունքով).
120 հատ-6-8 տարեկան երեխաների համար
120 հատ-9-12 տարեկան երեխաների համար.

240 հատ

- **Գավաթ** (1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը գրված դպրոցների համար)՝ 65 սմ, 60 սմ և 55 սմ բարձրությամբ, ոսկեգույն, էրոնիտե պատվանդանով.
3 հատ՝ 1-3-րդ դասարանցիներին մրցումների մրցանակակիրներին
3 հատ՝ 4-7-րդ դասարանցիների մրցումների մրցանակակիրներին.

Ընդ. 6 հատ

Անհրաժեշտ մարզագույք Եզրափակիչ փուլի մրցումների կազմակերպման համար, մարզագույքը համաձայնեցնել ՄՍՖԴՔ վարչության հետ

- **Մանկական հեծանիվ**՝ կարկասը մետաղական, քաշը 9-10 կգ, անիվների տրամագիծը՝ 12-14 դույմ, ղեկի բարձրությունը կարգավորվող և վրան զանգ ամրացված, բռնակները ռետինեպատ, արգելակումն ոտքով, կամ ոտքով և ձեռքով, նստատեղը ռետինապատ և կարգավորվող, հետևի անվադողին կից հավասարակշռող 2 փոքր անիվներ, դիմացի և հետևի անվադողերին ամրացված մետաղյա կամ պլաստմասյա թևակներ.

3 հատ

- **Մարմնամարզական օղակ**՝ ալյումինե, Հաստություն՝ 15-20 մմ, տրամագիծ՝ 90-100 սմ:

9 հատ

- **Գնդակ բասկետբոլի**. Արհեստական կաշվից, չափի (75-75.88սմ շրջանագիծ), քաշը 567-650 գրամ, 12 կտորից (պանել), երկու գույնանի, բացօդյա և փակ դահլիճներում օգտագործելու համար. N 5 կամ N 6.

4 հատ

- **Մարմնամարզական ներքնակներ**՝ չափը՝ 1 մ x 2 մ, պատրաստված սպունգից, երեսպատված արհեստական կաշվով, հաստությունը 7-10 սմ.

3 հատ

- ***Փոքր օղակ***՝ պլաստմասե նյութից, գունավոր համապատասխան օլիմպիական օղակների գույների, չափերը՝ 30-40 սմ.

4 լրակազմ (20 օղակ)

- ***Հաղթանակ բառի տառեր***՝ 30 սմ x 20 սմ չափսի, կարմիր գույնով՝ A4 տպագրական չափսի թղթի վրա, լամինացված, 4 լրակազմ.

28տառ

- **Ցատկի պարկ**՝ կտորից, 1.00 մ * 60 սմ-ի չափի.

4 հատ

- Երկար պարկ՝ սինթետիկ հումքից պատրաստված, թունել 3մ x 1մ չափսի, պարկի առաջնային մասը պետք է լինի մարմնամարզական օղակ՝ տրամագիծը 70 սմ, պարկը ծալած վիճակում լայնությունը 1 մ, երկարությունը 3 մ.,

4 հատ

- Արգելք՝ պատրաստված մետաղապլաստե խողովակից Ֆ 1 դույմ, բարձրությունը 90 սմ, վրայի ձողը Ֆ 2/3, ձողի երկարությունը 1,2 մ, վերջնական տեսքը համաձայնեցնել ՄՍՖԴՔ վարչության հետ ,

3 հատ

- Շարժական կամրջակ՝ պատրաստված փայտից, կամ նրբատախտակ 10մմ (ֆաներա) չափսերը՝ 1մ x 0.8մ, վերջնական տեսքը համաձայնեցնել ՄՍՖԴՔ վարչության հետ՝,

3 հատ

Մարզադահլիճի ձևավորման համար անհրաժեշտ գույք, *Եզրափակիչ փուլի մրցումների կազմակերպման համար*

- Միջոցառման ավարտին ճայթուկ (հրավառություն 6 կետից) ծառայության մատուցում, մարզադահլիճում,
- Բաններ միջոցարման անվանումով (խորդանիշով) պատրաստված պոլիէսթերային նյութից, բանների չափսը՝ 2 մ x 2 մ, 4 եզրերը մետաղյա օղերով 15-20 սմ հեռավորությամբ, բանների տեկստը համաձայնեցնել ՄՍՖԴՔ վարչության հետ՝ 1 հատ
- ՀՀ եռագույն դրոշ՝ պատրաստված անջրաթափանց կտորից (10 մ x 1.4 մ), եզրերը կարված և վերջնամասերը կարված՝ 2 հատ
- ՀՀ եռագույն դրոշ՝ պատրաստված անջրաթափանց կտորից (2.5 մ x 5 մ) երեք եզրերը կարված, իսկ դրոշի վերին հատվածը՝ 7 սմ լայնությամբ կարված մետաղական ձողին ամրացման համար նախ ատեսված: 1 հատ

Գրենական պիտույքներ՝

- Կաշվե թղթապանակ փափուկ կազմով և ՀՀ զինանշանով, 35 սմ x 23 սմ չափսի,

6 հատ

- Թոթե առաձանաո կավճած ստվարաթղթից, մետաղական ամրակով, A4 (210 x 297 մմ) ձևաչափի թեռթեռի համար,

40 հատ

- Ֆայլ (թափանցիկ աուիմերային թաղանթ, A4 ձևաչափի թղթերի համար, արագակալներին ամրացնելու հնարավորությամբ), 1 տուփ,

100 հատ

- Թոթե կաչուն ժապավեն՝ 48 մմ x 100 մ, տնտեսական, մեծ գանանափաթաթված ժապավեն 48 մմ լայնությամբ, սոսնձային շերտի հաստությունը՝ 0,018-0,030 մմ կամ 0,030-0,060 մմ, ժապավենի երկարությունը՝ 100 մ,

6 հատ

- Թուղթ A4 չափսի 1 (21 x 29.7), չկավճած թուղթ, օգտագործվում է տպագրման համար, թեիհկներ չպարունակող, մեխանիկական եղանակով ստացված, 80 գ/մ² (210 x 297) մմ,

2 հատ

- Թղթապանակ (ռեգիստրատոր)՝ 2 օղակով, պլաստիկ, լայնությունը՝ 80 մմ, A4 չափսի,

10 հատ

- Գրիչ գնդիկավոր, տարբեր գույների, տարբեր տեսակի կառուցվածքներով, մեծ և փոքր չափերով,

20 հատ

- Մատիտ, առաֆիտե միջուկով, հասարակ, սև, համապատասխան կարծրությամբ,

20 հատ

- Ապակարիչ, գրասենյակային ապակարիչ՝ N 10 ասեղներով կարված թղթերը բանդելու համար

2 հատ

- *Գովազդային նյութերի* պատրաստում (ֆոտո, տեսաֆիլմերի, նկարահանում),

մրցման օրը 2 օր

- **Այլ ծախսեր**՝ տրանսպորտային միջոցներ մարզագույքը տեղափոխելու, բեռնաթափելու և մարզագույքը հետ վերադարձնելու համար (Երևան -Ծաղկաձոր-Երևան–Ծաղկաձոր 1 բեռնատ. մեքենա, հաղորդավարի ծառայություն),

մրցման օրը 2 օր

Ծառայության մատուցման ժամկետը	
Սկիզբը	ավարտը
25.03.2017 թ.	17.05.2017 թ.

**Պարտադիր պայման է գույքի չօգտագործված լինելը.*

*** 1-ին և 2-րդ փուլերում անհրաժեշտ գույքը (պարգևատրման) Կատարողը հասցնում է ՀՀ մարզպետարանների և ԼՂՀ կրթության, գիտության և սպորտի նախարարության աշխատակազմերի գտնվելու վայրեր, 3-րդ փուլի գույքը՝ (պարգևատրման) ք. Երևան (ժամկետները համաձայնեցվում են Պատվիրատուի հետ).*

**** Եզրափակիչ փուլին՝ միջոցառման անցկացման համար անհրաժեշտ գույքը Կատարողը հասցնում է մրցավայր, Կատարողը իրականացնում է բոլոր կազմակերպչական և դահլիճի ձևավորման աշխատանքները, իսկ միջոցառման ավարտից անմիջապես հետո գույքը հասցնում է պահեստավորման վայր:*

**** *Բոլոր աշխատանքները համաձայնեցնել ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությա աշխատակազմի մասնայական սպորտի և ֆիզիկական դաստիարակության քաղաքականության վարչու, հետ:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն ք. Երևան, Աբովյան 9 ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն Հ/Հ 900011010957 ՀՎՀՀ 02586282	« Իմպերիում » ՍՊԸ ք. Երևան, ԱՐԱԲԿԻՐ Ա.ԱՎԵՏԻՍՅԱՆ 112 7 «Ինեկոբանկ»ՓԲԸ Հ/Հ 2050622060861001 ՀՎՀՀ 00135548
Աշխատակազմի ղեկավար՝ Վ. Էլոյան	Տնօրեն՝ Դ.Հովհաննիսյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
	Մ.Տ.

2017թ. 03 10 Հավելված 7
N ՍՊ-ՊԵՏՇՀ-17/0-108-2017 -ին կնքված
հատվածագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Աշխ. Հազ.ՀՀ դրամ

N	Ձեռք բերվող ապրանքների, աշխատանքների, ծառայության անվանումը	Ընդամենը	2017թ. Նախատեսվում է Ֆինանսավորել 22 2017 թ. պետական բյուջեի միջոցների հաշվին, ընդ որում											
			1-ին եռամսյակ		2-րդ եռամսյակ			3-րդ եռամսյակ			4-րդ եռամսյակ			
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
		1 = (4+5+6)	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
	Հայաստանի Հանրապետության մարզերի, Երևան քաղաքի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրապետական դպրոցների 1-ին և 4-րդ դասարանների աշակերտների միջև «Սպորտլանդիա» մարզական միջոցառման 2017 թվականի մրցույթի անցկացման ծառայությունների Հերթերում	19823.00			19823.00	19823.00	19823.00	19823.00	19823.00	19823.00	19823.00	19823.00	19823.00	19823.00
	Ընդամենը	19823.00	0.00	0.00	19823.00	19823.00	19823.00	19823.00	19823.00	19823.00	19823.00	19823.00	19823.00	19823.00

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն

ք. Երևան, Պուշկին 9
Հայաստանի Հանրապետության Ֆինանսների նախարարության գլխավոր վարչություն

2/2 900
2422

Ավագանի

Տնօրէն

«Իմպերիում» ՍՊԸ
ք.Երևան, ԱՐԱՐԱՏՅԱՆ 112/2

«Ինկերիումներ» ՍՊԸ

2/2 2066
2422 001

Տնօրէն

«ԻՄՊԵՐԻՈՒՄ»
«IMPERIUM»
00135548

Հավելված 3
«10» 03 2011թ. կնքված
N ՍՊ-ՊԸԾՁԲ-17/09-108-2011 ծածկագրով գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ
« Իմպերիում » ՍՊԸ
ք. Երևան, ԱՐԱԲԿԻՐ Ա.ԱՎԵՏԻՍՅԱՆ 112 7
«Ինեկոբանկ»ՓԲԸ
Հ/Հ 2050622060861001
ՀՎՀՀ 00135548

Պատվիրատու
Հայաստանի Հանրապետության սպորտի
և երիտասարդության հարցերի նախարարություն
ք. Երևան, Աբովյան 9
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900011010957
ՀՎՀՀ-02586282

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Կ.Տ.

Հավելված 3.1
<<____>>_____ 20 թ. կնքված
N_____ ծածկագրով գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ----------ի (այսուհետ՝ Պատվիրատու)
(Պատվիրատուի անունը)
----------ի (այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. -------ին կնքված N ---
---
(Կատարողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ---------- --ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
Անվանումը	Քանակական ցուցանիշը (փաստացի)	Չափի միավորը

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց	Ընդունեց հայտը նախագծած ներկայացուցիչ՝
_____ ազգանուն, անուն	_____ ազգանուն, անուն
_____ ստորագրություն	_____ ստորագրություն